

2. ԵՂԻԱ ՎՐԴ. ՓԷՋԻԿԵԱՆ

2 Փետրուար, 1964

Մանկութիւն

Վենետիկի Միլիթարեան Միաբանութեան երկնքին մէջ յանկարծ տրամօրէն հնչեց մահուան դանդը. ցնցուեցան վանքին որմերը. սուգն իր սեւ թևերով իջաւ վանքին վրայ, միաբաններու դէմքերուն եւ սրտերուն մէջ թափանցեց: Լիտուի ծովահայկաց հիւանդանոցին մէջ մեռած էր Հ. Եղիա Վրդ. Փէջիկեան: Դադրած էր բարախելէ այն սիրտը՝ որ երբեք դադար չունեցաւ սիրելէ եւ զործելէ. ոչ մէկ վիշտ զինքն ընկճած էր, ոչ մէկ թուր արդելք հանդիսացած՝ իր ճամբուն վրայ: Ապրեցաւ ուրիշին համար, եղաւ ընկեր աղքատին, հարուստին՝ բարեկամ, ընդունեցաւ ու նուիրեց, ոչ մէկ բան պահեց. աղքատ մանուկ եկաւ, աղքատ կրօնաւոր երկիրք թուաւ: Պարզ էր իր զրօշը. ամէն բանէ վեր, ամէն բանէ աւելի սիրելի՝ Կրօնք եւ Հայրենիք:

Ս. Ղազարի կամարներուն տակ անմար ջահ մըն էր, որմէ լոյս եւ ջերմութիւն առին բազմաթիւ սերունդներ. ու քանիներու՝ սրտերուն մէջ դրօշմեց հաւատք ու որդիական սէր դէպի Աստուած: Ս. Ղազար եւ Մուրաթ-Ռափայէլեան չեն կրնար զինքը մոռնալ. ամէն դասարանի մէջ, ամէն մանուկ ու մեծ սրտի մէջ՝ իր ներկայութիւնը կայ: Ամբողջ Վենետիկ քաղաքը զինքը ճանչցաւ. խոնարհ կոնտրափարէն մինչեւ բարձր իշխանութիւններ. ամէնուն բարի խօսք մըսած էր. աղքատին՝ թիկունք եղած էր, մեծերուն՝ խորհրդական. եւ մանաւանդ պարզ ու բարի իր հոգին զրաւած էր զինքը ճանչցողներուն սիրտը:

Հ. Եղիա Փէջիկեան, աւագանի անունով Յակոբիկ, ծնած էր Ալաոտան (Ախալքալաքի գաւառ) 4 Հոկտ. 1895ին: Չունենալով ընտանիքի գաւառ, բայց բարի հօր մը եւ բարեպաշտ մօր մը խնամքներուն տակ ստացած էր անական կրթութիւն, եկեղեցիի սէր եւ ուսման փափաք: Իր նախնական ուսումներն առած էր զիւզի ծխական դպրոցին մէջ. անշուշտ սաղմոս, քերական եւ ամէնէն բարձր զիրքը Նարեկի պիտի ըլլար: Բայց Յակոբիկ ուշիմ էր՝ լաւ իւրացուցած էր այդ նախնական պաշարը, մանաւանդ թէ սկսած էր սորվիլ նաեւ ռուսերէն, որ այդ տարիներուն մեծ զիւզերուն մէջ տեսակ մը չափանք էր՝ քաղցի պիտի ըլլայ կ'ըսէին զիւզերուն մարդիկ:

Ախալքալաքի գաւառը անասնաբուծութեան տեղ է, ընդարձակ դաշտեր ունի եւ Լոռիի անտառները: Սակայն Ալաոտան հեռու է լեռներէն, տափարակի վրայ ցորենի աշխարհ, եւ զուրկ պտղատու ծառերէ: Անշուշտ Յակոբիկ իր հօրը հետ ըլլալով քաղցաւ դաշտային աշխատանքներով՝ միակ քոյր մը ունէր, իրմէ տարեց, եւ տան մէջ ուրիշ փոքրիկ չկար:

Դպրոց, եկեղեցի եւ դաշտ եղան իր սրբոյն մօտիկ վայրերը, եւ մանուկն աճեցաւ պարզ երկնքի տակ, բնութեան ծոցին մէջ. ու ցմիշտ պահեց այդ բնական բարձր եւ անարուեստ նկարագիրը:

Իր զիւզին ժողովրդապետն էր Զմմառի միաբան Յովսէփ Վրդ. Սարուխանեան. Յակոբիկ մտերմացաւ անոր հետ, միասին երգեց եկեղեցւոյ մէջ. Վարդապետը

տեսաւ անոր մէջ երկնային կոչում. եւ Ս. Ղազար բախտաւոր եղաւ զայն իր կամարներուն տակ ընդունելու: 1908 Յուլիս 9ին, Պոլսոյ ճամբով, կը հասնէր Վենետիկ:

Հ. Քերովրէ Վրդ. Զրաքեանն էր ընծալարանի վերատեսուէր եւ Հ. Գաբրիէլ Վ. Լազարեան (Ախալքալաքի) փոխ մեծաւոր: Յակոբիկ ինքզինքն օտար չզգաց. երկու Հայրերու խնամքին տակ Նորընծալարանն եղաւ քաղցր բոյն մը, ուր կրնար Աստուծոյ մօտ, գիտութեան աղբիւրի ափին, առնել հոգեւոր եւ մտաւոր ամէն անունը:

Հազուեցաւ վանական սքեմը (8 Օգոստ. 1908) եւ եղաւ փոքրիկ հրեշտակ մը, զըւարթ, բարի եւ եղբայրասէր: Երկու ամիսէն պիտի հասնէր Նորչէնէն (Ախալքալաքի գաւառ) Թովմաս Յովհաննէսեան (այժմ Հ. Վահան), եւ կողք կողքի պիտի նստէին դասարանի մէջ, միասին նորընծայ պիտի ըլլային (19 Մայիս 1912), եւ տարի մը ետք՝ պիտի կատարէին Ժամանակաւոր ուխտը (9 Նոյեմբեր 1913): Ծուրջ երեսունի չափ ընկերներ ունէր ընծալարանի մէջ. բայց քանիներ թօթափեցան. մէկը Կարս դարձաւ, միւսը Սիւնիք, ուրիշ մը Մուշ. եւ այսպէս բազմաթիւ պատանիներ կոչուեցան, բայց քիչեր ընտրուեցան:

Դեպի Հոռոմ

Եկան նախորդ մեծ պատերազմին տարիները. Աւստրիացին Վենետիկի դռներուն առջեւն էր: Սաւառակներ կը ուժգնէին Տոմերու հրաշակերտ քաղաքը. բայց Ս. Ղազար քիչ մը հեռու էր կեդրոններէն. հազիւ ուսման կտորներ երբեմն կը թուէին իր տանիքին վրայէն: Վտանգը մեծ էր. հարկաւոր էր փոխադրել աշակերտները մինչեւ Հոռոմ. եւ 2 Նոյեմբեր 1916ին չորս ընկերներ ոտք դրին Հոռոմ: Հ. Վահան Յովհաննէսեան, Հ. Եղիա Փէջիկեան, Հ. Ստեփան Ֆերահեան, Հ. Գրիգոր Սարգիսեան արձանագրուեցան համալսարան: Տարի մը վերջ պիտի երթար նաեւ ամբողջ Միաբանութիւնը.

Թանգարաններ եւ զրադարաններ պիտի փոխադրուէին Ֆիրենցէ. վայրկեանները ծանր էին: Որքան եռանդ եւ ուսման սէր կար Հ. Եղիային մէջ. խումբին զրադիրն էր. արաւ եւ զեղեցիկ կը զրէր եւ ամբիոններու խօսքերը կ'ունենային ընկերովի զրեթէ հարազատօրէն: Տան մէջ, բոլորուած իր շուրջը, դաս կը սերտէին վիճաբանելով: Ինք կը բացատրէր իմաստասիրութիւն յունարէն, երբայեցեղէն եւ այլ գիտութիւններ: Տարին շուտով անցաւ. զրաւոր մրցումներն սկսան. 390 աշակերտներ կը մասնակցէին, բազմաթիւ աղգերէ բաղկացած, Ամերիկաներէն Ասիա եւ Եւրոպա բնակող աղգեր. բայց Միլիթարի գաւառները, թէպէտ բոլորովին օտար չըջանակի մէջ, յաջողեցան փառաւոր էջ մը բանալ: Հ. Եղիան յունարէնի ոսկի մետալ կ'առնէր եւ երկու արծաթ մետալներ: Հ. Վահան իմաստասիրութեան ոսկի մետալ: Հ. Գ. Սարգսեան երբայեցեղէնի ոսկի մետալը: Ծըռնդալից ծափեր ողջունեցին Հայութեան գաւառները:

Ժամանակն եկած էր Միաբանութեան մշտնջենաւոր անդամ զրուելու (20 Սեպտեմբեր, 1917): Ունէին իրենց սեփական ամբարանոցը՝ Սարինայի նկարչական լեռներուն մէջ. հոն, փոքրիկ մատրան մը մէջ, չորս հոգի ծնրաղիք՝ Մեծաւորին զիմաց ուխտ կ'ընէին Աստուծոյ եւ Հայրենիքին նուիրել իրենց երիտասարդ կեանքը, ամբողջ ապագայով:

Վեց տարի տեւեց համալսարանական չըջանը. ոչ միայն աստուածաբանական բարձր դասերով կը զրադէն անոնք, այլ բացառիկ արտօնութեամբ՝ համալսարանի զրադարանին մէջ գիտական ուսումներ ալ սիրեցին կատարել, նիւթեր տալով այդ տարիներու Բազմալէպին:

— Նայեցէ՛ք, այդ քանի մը Հայերը, յաճախ կը գոչէին ուսուցիչները, ոչ միայն լաւ աշակերտներ են, այլ արձակուրդներն ալ գրականութեամբ կ'անցընեն:

Եւ անոնք կը սիրէին կերակրներն այցելել Հոռոմի սրտամական աւերակները.

զարմանալի՝ բնազդ. հայկական բեկոր մը կը փնտռէին. ստէպ կը հանդիպէին աւերակի մը խորշին մէջ յայտնի հնագէտներու, որոնք բեկորի մը շուրջը կը վիճէին եւ իրենց մօտ կանգնած մտիկ կ'ընէին:

— Ի՞նչ կ'ուզէք, տղաք, կը հարցնէին հնախոյզները:

— Կ'ուզեմք մտիկ ընել եւ սարվիլ:

— Ի՞նչ ազգ էք:

— Հայ եմք, վեցետիկի Մխիթարեաններէն:

— Զարմանալի՝ ժողովուրդ. իսկ անոնք որ հոռմէացի են եւ պէտք է գրադին, փողոցները կը քափառին:

Ուսումնական վեց տարիներն անցան. եւ չպակսեցան անոնց վրայէն նախ Հ. Ղեւոնդ Տաշեանի եւ ապա Արհիապետի Գեր. Արքայոսէ՝ Սրապիոն Արքեպիսկոպոս Ուլուհոնեանի խնամքները. ո՛րքան սէր եւ ո՛րքան հոգածութիւն, մանաւանդ պատերազմի տարիներուն, եւ անկէ յետոյ՝ սովի չըջանին: Պէտք է մոռնալ ուրբայեւ Հ. Վրթանէս Խանդակեանը, որ խանութէ խանութ կը վազէր՝ փոքրիկ օրապահիկ մը ճարելու համար:

Աւարտած ուսումները իրենց ձեռքերուն մէջ իմաստասիրութեան եւ աստուածաբանութեան վարդապետական վկայականները, 8 Սեպտեմբեր 1922ին կ'ողջունէին իրենց կեանքին ամէնէն երջանիկ օրը՝ քահանայական սուրբ աստիճանին բարձրանալով: Աւագ, բախտ չունեցան Ս. Ղազարի կամարներուն տակ լսելու Ս. Ներսէս Շնորհալիին յօրինած, քահանայական ձեռնադրութեան համար, Ով անմահ հաց կեցացը: Իրենց օծումը Սարինայի ամարանոցին մէջ կատարուեցաւ, եւ անոնք անհամբեր թռան վեցետիկ:

Ուսուցիչ

Ս. Ղազարի Միաբանութիւնն ամփոփուած էր իր բոյնին մէջ. անցած էին պատերազմի արհաւիրքները: Հ. Նիկիա փէշիկեան քաջ զբարարագէտ եւ սիրահար մեր նախնեաց զորքերուն, պէտք էր լըծ-

ուիլ նորեկ ընծայացուներու դաստիարակութեան:

Նուիրական հողիով զբաղեցաւ մանուկներու հետ. սրբազրեց, շտկեց ու զարգացուց հայկեան լեզուն: Տուաւ իր սիրտն ու միտքը: Յոգնիլ չէր զիտեր, դադար չունէր. Խորենացիէն Նիկիա կը ցատկէր, Աւետարանէն Նիկիա, ոչ միայն ընտիր զբարար, այլ եւ հիներու հողին ալ դրոշմելու մատաղ սերունդին մէջ:

Իր ձայնը մեղմ եւ հաճելի էր. հմուտ Շարականներու՝ նա կը պատրաստէր տօնական երգերը: Հ. Ղեւոնդ Տաշեանի պէս հմուտ շարականագէտ ուսուցիչ մը ունենցած էր եւ հաւատարիմ աւանդապահ. այժմ կը փոխանցէր ուրիշներու: Սրտով կը փոխանցէր, եռանդով կ'երգէր, հաւատքով կը կատարէր իր պաշտօնը. զիտէր թէ հիներու սուրբ հողին երգերուն հետ կը թափանցէ սրտէ սիրտ:

Ո՛րքան բծախնդիր էր լեզուական կատարելութեան, ստորակէտ միտք իր աչքէն չէր վրիպեր. Բազմավեպ, զիրք՝ հրատարակութիւն անպատճառ իր ձեռքէն պէտք էին անցնիլ. մասնաւոր ձեռք է լաւ սրբազրիչ ըլլալ: Յաճախ կը տեսնէի աշակերտներուն տետրակները անխնայորէն կարմրեցած, ծանօթագրուած, քերականական ուղղումներով ծեփուած. եւ ապա դասի ժամանակ, թերեւս հարկ կ'ըլլար ժամեր մնալ բացատրելու համար կատարուած սխալները: Բայց մտքերը կը զարդանային, զրարարն ու աշխարհարարը ձեւ ու մարմին կ'առնէին այդ զեղազէտ արձանագործին զրչին տակ:

Գրեթէ մինչեւ իր կեանքին վերջին ժամանակներն ալ շարունակեց այդ եռանդուն ուսուցումը: Կը սիրէր դասուանդել, զիտէր թէ այդ է ճամբան ազգին դարթօնքին, այդ է հաստատուն հիմք Մխիթարի Տան: Դասերու հետ ունէր նա եւ հողիներ դաստիարակելու շնորհ. միշտ քաղցր խօսք մը, մեղմ ազդարարութիւն մը կը հետեւէին իր դասերուն: Սիրելով կը յանդիմանէր անառակները՝ հայրական շէշտ մը կար անպայման իմ ամենախիստ վայրկեաններուն ալ: Սիր-

տը մեղրով կ'անուշցնեն, կ'ըսէր միշտ, եւ 40 տարի զպրոցական ամբիոններուն վրայ մնաց այդպէս (1923-1963), աննահանջ մարտիկի պէս. ընդդէմ ձուլման պաշար մղեց: Ամէն տեղ, ամէն խօսակցութեան ժամանակ, երբ օտար բառ մը լսէր՝ խելոյն կը զգացուէր եւ հայերէնը սեղանի վրայ կը դնէր:

Քանի՞ քանի աշակերտներ, ցրուած աշխարհի ամէն կողմ, իրեն կը պարտին հայերէն լեզուն եւ հայրենիքի սէրը: Ինչ որ թանկագին ունէր՝ տուաւ, սիրտն, հողին եւ ոչինչ պահեց իրեն համար, ոչ իսկ փախաքցաւ անուն մը ձգել, տիպոսներ ստանալ: Հ. Նիկիա Փէշիկեան, կրօնաւոր Մխիթարեան. ասիկա էր իր սիրած տիպոսն ու անունը. եւ այդ անունով պատեցին իր դադարը՝ Սուրբ Ղազարի հողին յանձնելու համար, վրան նետելով նաեւ ասի մը հող՝ Հայաստանէն բերուած:

«Բազմավեպ»ի խմբագիր

Իր ուսումնական կարողութիւնները չէին վրիպած մեծերու աչքերէն. անիկա շատ յարմար էր պատուով եւ եռանդով վարելու այդ մեծ ամսաթերթին խմբագրութիւնը: Երիտասարդ էր, կորովի եւ անընկճելի՝ աշխատանքներու մէջ. հազիւ 35 տարեկան էր երբ ձեռք առաւ թերթը (1930-1939). զբաղանք, բանասիրական, մանաւանդ լեզուական հմուտ եւ հիւթեղ յօդուածներ պիտի յաջորդէին իրարու: Երկար եւ խոր ուսումնասիրութիւններ՝ Նիկիա Կողբացիի եւ Նիկիա մասին՝ Բազմավեպին պիտի տային Ալիշանի օրերուն փայլը:

Եթէ ընդարձակ զորքերու անուններ չընդլեց, սակայն, կարելի է ըսել, չեղաւ որ եւ է հրատարակութիւն՝ որուն մասնակցած չըլլայ. այն հողիներէն էր որ անձնական անուն եւ պատիւ չեն փնտռեր. այլ հասարակաց զորքերուն նուիրուած, ամէնուն հետն էր, ամէն զործի մէջն էր: Տասը տարի վարեց Բազմավեպի խմբագրութիւնը. արժէքաւոր յօդուածներու շտեմարան եղաւ. բանասիրութիւն, զեղ-

արուեստ, զբաղանքներ եւ ազգային կեանքը զտան լայն էջեր:

1933ին Հ. Վարդան Հացունիի հետ լոյս ընծայեց Բազմավեպի էջերէն Քրիստոսի փրկագործութեան 1900ամեակին նուիրուած հսկայ հաւաքածոյ մը՝ մեր նախնեաց զորքերէն. բազմաթիւ անտիպ ձեռագիրներ եւ մանրանկարներ լոյս տեսան: 1935ին, երկրորդ բացառիկ մը, աւելի ճոխ, նուիրուած Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան 1500ամեակին: Հ. Ն. Փէշիկեան հաւաքեց, խմբագրեց եւ արժանաւոր յիշատակ մը ապահովեց այդ մեծ դարագարին:

Շուտով հասաւ 1936 թուականը, այժմ Մուրատ - Ռաֆայէլեան հիմնարկութեան հարկւրամեակն էր. պէտք էր մեծ շուքով տօնախմբել. դարձեալ աշխատանքի լըծուեցաւ՝ հին յուշեր, զիւանական թուղթեր, լուսանկարներ հաւաքելու: Գրեց անուանի աշակերտներուն վարձերը, վարժարանին հարկւրաւոր սաներու ոսկեղէն հունձքը կազմեց եւ շքեղ յիշատակ մը ձեռքեց Մուրատ-Ռաֆայէլեանի պատմութեան:

Մեծաւոր նորոգւած վանականներու

Սուրբ Ղազարի մէջ ամէնէն փափուկ եւ դժուարին պաշտօններէն մէկն է փոքրիկ ընծայացուներու տեսչութիւնը: Երկրորդ պատերազմէն վերջ, Հ. Նիկիա երկու տարի փոքրերուն հետ ապրեցաւ եւ երեք տարի (1949-1952) միջնակարգ աշակերտներուն հետ: Հողիով նուիրուած այդ սուրբ զորքին, պէտք պատրաստէր Մխիթարի տան զաւակները եւ ապագայ սերունդը: Ի՞նչ չունէր տալիք. ամբողջ հողի եւ հաւատք եւ աղօթքի մարդ, անշուշտ պիտի շինէր սրտեր, որոնք նմանէին Մխիթարի, որոնց զերազոյն նպատակն ըլլար կրօնաւորական կեանքը, ուսում եւ սրբութիւն: Արուեստաւորի պէս կը սրբազրէր մարդկային անխուսափելի թերութիւնները: Իր լաւազոյն զէնքը սէրն էր. կը սիրէր այդ մանուկները, որոնք հեռու ծնողական գուրգուրանքնե-

ընդհանուր, պէտք է ինքն իր մէջ դնեն հօր եւ մօր հարազատ փոխանորդ մը: Հողեւորին հետ ուսում, մանաւանդ հայերէն, դրարար եւ աշխարհաբար, մատենագրութիւն եւ պատմութիւն, այն՝ ինչ որ Մխիթարեանի մը հոգեկան դարձը կը կազմէ:

Կեանքի վերջին շրջանին ալ այդ պաշտօնին կոչուեցաւ եւ հակառակ իր ծանր վիճակին՝ կը խորհէր աշակերտները հիւանդանոցին մէջ տառապալին, յաճախ իր սաներուն անունները կու տար, կը հարցնէր եկող դացողին, խորհուրդներ կու տար եւ յոյսով կ'ապրէր՝ դարձեալ անոնց քով վերադառնալու: — Յաւ է, կ'անցնի, կ'ըսէր եւ յոյսով կը սպասէր վերադարձի:

Տեսուչ Մուրադ-Ռափայէլեան վրժ.ի

Կարեւոր եւ պատուարներ պաշտօն մըն է այդ մեծ վարժարանին տեսչութիւնը: Հանգուցեալն հինգ տարի (1953-1958) զոհուեցաւ ազգին զաւակներուն համար. ոչ միայն կրթական եւ ուսումնական դեկերը ձեռք առաւ, այլ եղաւ նաեւ հայութեան հոգիին ներշնչարանը: Դարձեալ հայկական ուսումնական կրթական հակառակ տեսչական բազում զբաղումներու, անցաւ դասարանէ դասարան, միշտ եղիւնք մը, կամ Աւետարան մը, կամ Եղնիկ մը թեւին տակ. կարգաւ, բացատրել, մեկնել եւ զբարարը ձեւացնել այդ մեծ հեղինակներու օրինակին վրայէն:

Բազմացան աշակերտները, մանաւանդ ինքը բարերարները գտաւ՝ սաներ որդեգրելու. երբ բարեխիտ մէկը յանձն կ'առնէր զաւակ մը որդեգրել վարժարանին մէջ, ուրախութեամբ նամակ կը հասնէր Հալէպ կամ Եգիպտոս, Պոլիս կամ Ֆրանսա, հայ մանուկ մըն ալ հասցնելու բարձրագոյն ուսման:

Իր ծրարէն չէր վրիպած նաեւ թատրոնը. զիտէր թէ հին աւանդութիւն է ազգային կեանքը տանիլ բեմին վրայ, չարունակել Պետրոս Աղամեանի, Վ. Փափաղեանի կամ իշխան Բաղդատիկի աւանդութիւնները: Թատրոնը կրթական էր.

աշակերտը կը վարժեցնէր ըլլալ համարձակ, տեսնել կեանքին բարդութիւնները, տրամաբանել, յուզուիլ եւ յուզել սրտերը: Քանի՜ անգամներ չքեղ հանդէսներ սարքեց զահլիճին մէջ. կանչեց հայ եւ իտալացի նշանաւոր երգիչ-երգչուհիներ, նըւադախումբ բերաւ՝ զեղարուեստական հանդէսներ սարքելու: Երբ Յովհաննէս Ի. Պապը Վենետիկի Պատրիարք էր, ներկայ էր զրեթէ ամէն հանդէսի. հաճոյքով կու դար իր Հայերուն մէջ:

Բազմաթիւ որակաւոր սաներ հանեց, որոնք համալսարաններու մէջ առին բարձր ուսում եւ անշուշտ երախտապարտ են այդ անխոնջ դաստիարակին:

Ոչ միայն վարժարանին մէջէն հետեւեցաւ սիրով ազգին զաւակները դաստիարակելու, այլ եղաւ ճշմարիտ հայր մը՝ չքաւոր ուսանողներու: Բազմաթիւ ազգայիններ, Միլան եւ այլուր, բազմաթիւ նամակներ ունին. Հայր Եղիան կը խընդրէր իրենց սրտի լուծման՝ աղքատ սաներու համար: Ամէն ուսանող իր սրտին մէջ մասնաւոր տեղ ունէր: Առաւ ու տուաւ, առանց իր անձն ու վանքը խորհելու. առանց անուն կամ երախտապարտութիւն փնտռելու. ազգին զաւակները պիտի երջանկանային, ուրիշ ոչինչ կը խորհէր: Օգնութեան եւ ազաւանքի բազմաթիւ նամակներ կը մնան իր դարակներուն մէջ: Մինչեւ վերջին վարկեանը այս կամ այն ուսանողի մասին կը խորհէր. — Այս ինչ հասցէէն դրամ պիտի հասնի. դրկեցէ՛ք այն ուսանողին, կ'ըսէր այցելու վարդապետներուն: Մեծ էր սիրան, իր հասակէն աւելի. մերժել չէր զիտեր, մոռնալ չէր զիտեր, հաճոյք կը զգար տալու եւ միշտ կը կրկնէր.

— Կաւ է տալ քան առնուլ:

Ընդհ. Բարտուղար եւ խորհրդական

Ընթերցողը պիտի ըսէ թէ այս ո՛րքան պաշտօն վարած է այդ վանականը. արդեօք յոյնիլ չ'էր զիտեր. ժամանակ կը գտնէ՞ր բազմաթիւ դործերու հասնելու: Հակառակ նիհարակազմ ըլլալուն, կորո-

վի եւ ջղուտ, ամբողջ կամքի ոյժ, միաժամանակ շատ մը պաշտօններ կը վարէր:

Խոհեմ, զգուշաւոր, յարգող հեղինակութեան եւ մանաւանդ սրտակից բնաւորութեամբ զրաւած էր բոլորին համակրանքը: Երեսուն տարի (1935-1964) վարեց Միաբանութեան ընդհանուր քարտուղարի պաշտօնը. փափուկ եւ պատասխանատու դործ՝ որ մեծ ձեռնահասութեամբ կատարեց եւ եղաւ Արհ. Սրապիոն Արք. Արքահօր թեւ թիկունքը եւ Միաբանութիւնը ներկայացուց պաշտօնական տեղեր: Յաճախ միաժամանակ ընդհանուր խորհրդականի պաշտօնն ալ իր վրան ծանրացած էր: Բացառիկ կերպով վստահեցնէր, Միաբանի տան եւ անունին նախանձախնդիր, փոթորկալից ժամանակներուն մէջն ալ զիտցաւ իր բարերար եւ ազդեցիկ դերը կատարել:

Հայր հայ գաղթականներու

Պատերազմի արհաւիրքներէն ճողոպրած հայ զաղթականներուն իսկական հայրիկ մը եղաւ Հ. Եղիան: Ի՞նչ դիմումներ, ճամբորդութիւններ կատարեց, մէկիկ մէկիկ բոլորն ալ տեղաւորելու համար մինչեւ հեռաւոր Ամերիկաները: Միաբանեց, հաշտեցուց, քաջալերեց, պաշտպանեց, համոզեց, զբաղանք ու աշխատանք հայթաթեց անձնուիրարար: Երկրորդ աշխարհամարտի աւարտելուն, 1945էն առկին, տարիներով աշխատեցաւ, եւ ամէն զոհողութիւն յանձն առաւ՝ ի սէր իր հայրենակից այս եղբայրներուն, որոնք այսօր աշխարհի չորս կողմերէն երախտապարտութեամբ կ'օրհնեն յիշատակը սիրելի Հ. Եղիային:

Դէպի Հայաստան

Հ. Եղիա Փէշիկեան Իտալիայէն զրեթէ զուրա չէր ելած: 1908ին Ս. Ղազար մըրտած էր եւ Ս. Ղազարի երկնքին տակ ապրած: Հազիւ 1954ին փոխտտական այցելութիւն մ'ըրաւ Երուսաղէմ, Պէյրութ, Հալէպ: Իր միակ յիշատակն եղաւ 15 օր

Քեսապ մնալը (Սիւրիոյ հայկական դիւղը): Հեռաւոր Կիլիկիոյ մէկ ծայրն էր այդ դիւղը, հայաբնակ եւ սիրելի բոլոր հայ այցելուներուն:

Պաշտօնի բերումով, Մուրադ-Ռափայէլեանի տեսչութեան շրջանին, այցելեց Յունաստան, Ֆրանսա եւ Անգլիա:

Իր մեծ բախտն եղաւ երբ, 1962ին, Վեհափառ Վազգէն Կաթողիկոսի հրաւերով՝ զնաց Հայաստան, Ս. Մեսրոպի 1600ամեակին մասնակցելու՝ Միաբանեան Միաբանութեան կողմէն: Օշականը խորապէս տալաւորուած մնաց իր սրտին մէջ: Ի՞նչ յուզումով եւ խանդավառ կը խօսէր վերածնող Հայաստանի մասին. քանի՜ մեծ դէմքեր ճանչցած էր, եւ որքան ներշնչուած ճառ մը խօսած էր մեծ Հացեկացիի տօնին առթիւ: Այդ ժամանակ բախտ ունեցաւ տեսնել նաեւ իր միակ քոյրը եւ անոր զաւակները: Հայրը կորսնցուցած էր 1919ին, Թուրքերու Կովկաս արշաւած շրջանին. մայրը շատոնց վախճանած էր, եւ կը մնար քոյր մը՝ իր զաւակներով. գտաւ, համբուրեց, առաւ իր կարօտը: Քոյրն իրմէ տարի մ'առաջ վախճանեցաւ եւ ինքն հետեւեցաւ անոր:

Ծաղիկ եւ պատկեր

Եթէ Սուրբ Ղազար դրախտի կը վերածուի ամառնային շրջանին, եւ դունադեղ վարդեր, հիրիկներ, շուշաններ ու ծաղկալից ծառեր կը շրջապատեն վանքին մուտքն ու քառանկիւնը, Հ. Եղիայի քըրտինքներուն արդիւնքն են: Արդէն 1947ին ամէն ջանք թափեց հրաման ստանալու Ս. Ղազար կղզին մեծցնելու համար. հակառակ բազում դժուարութիւններու՝ յաջողեցաւ քաղաքապետարանէն հրաման ըստանալ: Չորս տարի յետոյ, 14.000 մեղր տանալ հող աւելցաւ, եւ վանքն եւ քառանկուսի հող 28.000 մեղր քառակուսի, Հազար շուրջ 28.000 մեղր քառակուսի, Մարտի տարի չերտելով դարդարեց մուտքին հրապարակը, ուր ամէն այցելու անպայման պիտի դռէ. Ասիկա արքայութիւն է:

Իր սիրելի զբաղումներէն մէկն էր նաեւ

պատկերներու թանգարանը. իրեն վերապահուած էր զանոնք արուեստօրէն զետեղել, գրել հեղինակներուն անունն ու դարձ. դասաւորել՝ զպրոցի համեմատ, եւ հայկական նոր նկարներ ստանալ ու ճշխացնել մեր հաւաքածոն:

Եթէ ազգայիններ վաճին այցելելու, իր հողին զուրս կ'ելլէր, մանաւանդ երբ Հայաստանէն կու գային. պէտք էր մանրամասն շրջեցնել, բացատրել եւ ցոյց տալ հայ արուեստը: Կը հանէր թանկագին ձեռագիրները. Տեսէֆ եւ հայարտացէֆ հայ բլլալնուդ համար. միշտ այս էր իր խօսքը:

Վեներտիկ եւ Հ. Եղիա

Փաւրէ Ելիա (Հ. Եղիա) կարելի էր լրեսել ամէն մէկուս քաղաք երթալու ժամանակ. ծանօթ էր նահանգապետէն՝ ոստիկանապետին, քաղաքապետին եւ ծովային հրամանատարներուն, եկեղեցական իշխանութեանց եւ Ամենապատիւ Ծիրանաւոր Պատրիարքին, ծանօթ էր աղքատին եւ զիտնականին: Բոլորին վրայ բարի եւ սուրբ կրօնաւորի ազդեցութիւնը:

Բաժ էր. պարզ էր, աղնիւ եւ մտերիմ՝ իր յարաբերութիւններուն մէջ: Շատեր իրեն կը դիմէին՝ զործ մը, օգնութիւն մը պահելու համար. եւ քանի՞ մեծամեծներու զոներ զարկած էր՝ անդործ մը, աղքատ ընտանիք մը երջանկացնելու համար: Չէին մերժեր. դիմէին թէ քրիստոնէական բարի հողիով կ'աշխատէր, շահ չունէր, պատիւ չէր փնտռեր: Գիտէին թէ հողելին կը սիրէր Իտալիան եւ անոր մէջ չըքնող Վենետիկը: Իր թաղումին օրը, հաւաքակ անսովոր խիտ մշուշին, հարիւրներով փութացած էին Փաւրէ Ելիան սուրբ հողին յանձնելու: Պետական եւ քաղաքական բոլոր պաշտօնատուները ներկայացուցիչներ ունէին, եւ կարելի էր կարդալ ամէնուն երեսին վրայ տրամութեան եւ ցաւի զգացումը: Հարիւրաւոր հեռադիրներ, նամակներ ամէն կողմէն կու գային ազգացուցանելու թէ Միւթարեան Միարանութիւնը թանկագին անդամ մը կորսնցուցած էր՝ Ս. Ղազարի զերեզմաննոցին մէջ հանդիստ տալով վաստակաւոր եւ խոնջ կրօնաւոր, հայրենասէր Հ. Եղիա վարդապետ փէշիկեանին:

Հ. Վ. Յ.

ՅԱՒԱԿՅԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ՝ ԷՋՄԻԱԾՆԻ ՎԵՀԱՓԱՌԻՆ

Առ Արհ. Գրպծ. Տ. Սրապիոն Արքայսկ. Ուլուիոնեան
Ընդհ. Արքահայր Միսիրարեան Միաբանութեան – Վեներտիկ

Ս. Էջմիածին, 13 Փետր. 1964

Յաւով խմացանք մահը Հ. Եղիա փէշիկեանի: Մեր խորին վշտակցութիւնը Ձեզ եւ Միւթարեան Ուխտին: Թող Տէրը լուսաւորէ իր բարի եւ հաւատաւոր հողին ու անսասան պահէ Մեծն Միւթարայ Տունը:

Օրհնութեամբ

ՎԱԶԳԻՆ Ա.

Կաթողիկոս Ամենայն Հայոց

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ

ԽՕՍՈՒԱԾ՝ Ս. ՂԱԶԱՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՄԷՋ

Միանձն եկեղեցականը, զոր այսօր կը յանձնենք Ս. Ղազարու սուրբ հողին՝ Ազգին մէջ յարգուած անուն մը ունէր, ո՛չ միայն Միւթարեանի իր հանգամանքով՝ այլեւ երկնքէն հետը բերած եւ հիմա զէպի նո՛յն այդ երկինքը հետը տանող բազմաճիւղ առաքինութեանց եւ յատկութիւններուն ճամբով:

Միւթարեան Միարանութիւնը միշտ ունեցեր է հանճարեղ մտքեր, եւ միշտ ալ պիտի ունենայ, բայց շատ խնդրական է որ իր ծոցին մէջ կրկնուի հանդուգեալին տենդոտ եւ երեք հանդիստ եւ յոգնութիւն չճանչցող խառնուածքով օժտուած այլ կուսակիցի եկեղեցական մը:

Նկարագրի այդ շեշտուած դիժը, մեր յաւէտ անմոռանալի Հայր Եղիան կ'առաջնորդէր ամէն ուղղութեամբ եւ ամէն մարդի վրայ, Ս. Ղազարու շրջափակէն ներս բլլայ՝ թէ շրջափակէն դուրս, բառնալով զժողովրդութիւններ, լուծելով հանդիսներ, սրբելով արցունք մը:

Բարեկամն էր չքաւորին, կեանքին լուսանցքին վրայ մինակ մնացած անկարեններ, որովհետեւ զերազնիւ սիրտ մըն էր եւ խորապէս աստուածավախ միտք մը:

Իր մէջ կ'ապրէր նրբազգեաց բանաստեղծը:

Հոյակապ հայ մըն էր եւ թանկագին Միւթարեան մը, խոնարհամիտ եւ համեստ, եւ ո՛վ որ անգամի մը համար գէթ չփուլ ունեցած էր անոր հետ՝ իր ներսիդին կը զգար զարմանալի ներկայութիւն մը, որ խտացումն էր անոր զգայուն սրբունէն եւ տոկուն մտքէն ճառագայթող ոյժին:

Այդ ոյժը առաւելապէս բարոյական այն ոյժն էր՝ որ զայն պարթեւահասակ ոտքի՝ կանգնեցուցած էր ամբողջին առջեւ, 1962ին, հայրենի հողին վրայ տեղի ունեցող Ս. Մեսրոպի ծննդեան 1600ամեակին նուիրուած հանդիսութեան ընթացքին ու զառնալով օրուան նախագահին՝ բացազանչած էր գերյուզեալ ձայնով մը, — Ընկե՛ր նախագահ, տօնակատարութիւնը աւարտելու վրայ է, ու ես, իբրեւ հայրենի Ուխտաւոր եւ որպէս միանձն Միւթարեան՝ խօսք կ'ուզեմ, ու արտասանած էր բազմահմուտ, չմոռեցուցիչ ներբողականը Ս. Մեսրոպ Մաշտոցի կատարած գործին:

Նկատի առած իր այդ բարոյական ոյժին հղօթութիւնը՝ միայն մարդկայնօրէն, զիտակաւորէն անյաղթահարելի եւ անդոր չիւանդութիւն մը զայն կրնար բերել ծունկի դեռ իր ոյժերուն լիութեանը մէջ, որ հակառակ իր շուրջ եթանասուն տարիներուն՝ երիտասարդի մը պէս միշտ պատնէշին վրայ էր, զրիչը ձեռքին եւ անսպաս սիրտը անոր զօրավիշ:

Յուզումնահար կը խոնարհիմ իր անբասիր յիշատակին առջեւ, ու կ'ըսեմ. — Հանդէ՛ք խաղաղ, սիրելի՛ Ուսուցիչս, քու այնքան սիրած Ս. Ղազարու ձիթեանց եւ նոճիներուն հովանիին տակ, ու երկնքէն, զոր նոր կը ճանչնաս ահա, հսկէ եղբայրակիցներուդ եւ նաեւ մեր՝ հողի բնակիչներու վրայ:

Վեներտիկ – Ս. Ղազար

4 Փետր. 1963

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ